9457

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«14» 10 2026թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

**ԲՓ № 151-26**

***Նախաձեռնող՝*** ***«ՋԻԷՄԷՆ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ***
*Երևան, Արաբկիր, Ադոնց փ., 6/2 շ., բն.113*

***Գործունեությունը՝*** ***Մետաղական օգտակար հանածոյի արդյունահանում***
*Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Ջառիթափ բնակավայր*

***Առդիր՝ 6 թերթ***

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ №** 151-26

«14» հոկտեմբեր **2026թ.**

**Զառիթափ բնակավայրի Սոֆի-Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայրի արդյունահանման (ժամկետի երկարաձգման) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

| | |
|---|---|
| Ձեռնարկող՝ | «ՋԻԷՄԷՆ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ |
| Ներկայացված նյութեր՝ | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Ա կատեգորիա/ |
| Գտնվելու վայրը՝ | Վայոց ձորի մարզ, Վայք համայնք, Զառիթափ բնակավայր |

**Ներածական մաս.** Սոֆի-Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայրը տեղակայված է Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում՝ Վայք համայնքից 4,5 կմ, Զառիթափ բնակավայրից 6 կմ, Հերհերի ջրամբարից 2 կմ, Ազատեկի հանքավայրից 4,7 կմ հեռավորությունների վրա: Հանքավայրը գտնվում է Արփա գետի միջին հոսքում՝ ձախ ափին, 210 մ հեռավորության վրա:

Հայցվող տարածքի հողերը հանդիսանում են գյուղատնտեսական ու արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասեր:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի բ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է որպես Ա կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Նախատեսվող գործունեության նպատակն է իրականացնել Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Զառիթափ բնակավայրում գտնվող Սոֆի-Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայրի արդյունահանման աշխատանքների ժամկետի երկարաձգում:

Սոֆի-Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայրի կոնդիցիաների պարամետրերը և դրանց հիման վրա եզրագծված ու հաշվարկված պաշարները 2007 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաստատվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության 2008 թվականի հունիսի 27-ի N182 որոշմամբ:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Հանքավայրի շահագործման վերաբերյալ ընկերությունը 2012 թվականի հունվարի 23-ին ստացել է ԲՓ N 03 փորձաքննական դրական եզրակացություն:

2024 թվականի ապրիլին օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության վերականգնումից հետո Սոֆի-Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայրում կատարվել են բացման և որոշակի լեռնակապիտալ աշխատանքներ, որոնց էլ հաջորդել է օգտակար հանածոյի արդյունահանումը՝ մոտ 7500 տ: Հանքաքարի հաշվեկշռային պաշարների մնացորդը կազմում է 132.1 հազ. տ: Սոֆի-Բինայի երակային ձևաբանությամբ հանքակուտակի միջին հզորությունը կազմում է 1.25 մ:

Հանքավայրի և նրան հարող տարածքում բացարձակ նիշերը տատանվում են 1470 մ-ից մինչև 1900 մ սահմաններում:

Հանքավայրի բացման, լեռնակապիտալ և հանքաքարի արդյունահանման աշխատանքներ իրականացնելիս կատարվել է մոտ 18750 մ$^3$ ծավալով մակաբացման ապարների հեռացում, ուստի մակաբացման ապարների մնացորդը կազմում է 2 533 420 մ$^3$:

«ՋԻԷՄԷՆ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ին տրամադրված լեռնահատկացման եզրագծի ծայրակետերի կոորդինատներն՝ ըստ WGS-84 (ARMREF 02) կոորդինատային համակարգի:

| | X | Y | | X | Y |
|---|---|---|---|---|---|
| 1. | 4394394.0 | 8544367.04 | 4. | 4394960.0 | 8545753.0 |
| 2. | 4394853.0 | 8544367.05 | 5. | 4394395.0 | 8545752.0 |
| 3. | 4394961.0 | 8544725.0 | | | |

Հայցվող տարածքի ծայրակետային կոորդինատներն են ARM WGS-84 համակարգով

| N | X | Y |
|---|---|---|
| 1 | 4394783.4122 | 8544654.4950 |
| 2 | 4394870.7154 | 8544710.6845 |
| 3 | 4394851.4122 | 8544963.4950 |
| 4 | 4394761.4122 | 8545361.4950 |
| 5 | 4394708.4122 | 8545400.4950 |
| 6 | 4394589.4122 | 8545345.4950 |
| 7 | 4394681.4122 | 8544904.4950 |

Հանքավայրը նախատեսվում է մշակել բաց եղանակով: Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ ապրանքային հանքաքարի նախատեսվում է ընդունել 10 հազ. տ/տարի:

Մակերևույթում բացահանքի գլխավոր երկրաչափական պարամետրերն են՝

-բացահանքի խորությունը՝ 94 մ,

- բացահանքի երկարությունը՝ 710 մ,

- բացահանքի լայնությունը՝ 166 մ,

-ընկերությանը արդյունահանման թույլտվություն է տրամադրվել 11.4 հա մակերեսի համար,

-հատակագծում բացահանքի մակերեսը կազմում է 9,7 հա,

-բացահանքի ծառայության ժամկետն ընդունվում է 13.8 տարի:

Հանքամարմինն ամբողջությամբ մշակվելու է, համաբացահանքային նշանակության կորուստներ, որոնք թողնվելու են ընդերքում բնամասերի տեսքով (բացահանքի հատակում և կողերում) չեն լինելու: Հանքաքարի աղքատացման փորձարկման համար իրագործվելու է

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՆԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER OF RA MINISTRY OF NATURAL RESOURCES

օգտակար հանածոյի սելեկտիվ պայթեցում և հավաքում: Օգտակար հանածոյի շահագործական կորուստները կազմում են 2.5 հազ. տ:

Քանի որ Սոֆի-Բինայի հանքավայրն արդեն իսկ շահագործվում է, բացահանքային դաշտի բացման ու լեռնակապիտալ աշխատանքներն արդեն մասամբ իրականացվել են: Հանքավայրի օգտակար հանածոյի մնացորդային պաշարների շահագործման աշխատանքները շարունակելու համար հաջորդ մինչև 1470 մ բարձրության նիշ ունեցող հանքաստիճանների բացումը նախատեսվում է իրականացնել բացող թեք կիսախրամներով: 1470 մ բարձրության նիշ ունեցող աստիճանից մինչև 1420 մ բարձրության նիշ ունեցող աստիճանը նախատեսվում է կառուցել ներքին, թեք, տրանսպորտային ընդհանուր խրամ, որից կտրող խրամներով բացվելու են համապատասխան աստիճանները:

Դատարկ ապարների նախնական փխրեցումը նախատեսվում է կատարել հորատապայթեցման աշխատանքների միջոցով: Հորատապայթեցման աշխատանքները կատարվելու են հորատանցքային լիցքերի օգտագործմամբ: Հորատանցքերի հորատման համար նախատեսվում է 105 մմ հորատման տրամագծով GP 458 մակնիշի պնևմոհարվածիչով հորատման հաստոցը: Հանքաքարի նախնական փխրեցումը նախատեսվում է կատարել 42 մմ տրամագծով պայթանցքային լիցքերի միջոցով: Պայթանցքերի հորատման համար ընդունվում է ՊՊ-50Վ մակնիշի հորատիչ (պերֆերատոր):

Հիմնականում փխրեցման համար, որպես պայթուցիկ նյութ, նախատեսվում է օգտագործել Գրամոնիտ 79/21 կամ նրան համարժեք տեղական արտադրության այլ պայթուցիկ նյութեր /Р 1-4/: Որպես պայթեցման միջոց կիրառվելու է դետոնացիոն քուղ, էլեկտրաճայթիչներ և տրոտիլի պայթաղլուսիկներ: Ընդունվում է պայթեցման կարճ դանդաղեցված էլեկտրական եղանակը: Պայթեցման աշխատանքները պետք է կատարվեն լիցենզավորված հատուկ կազմակերպության կողմից:

Փխրուն մակաբացման ապարների ծավալը կազմում է 14799 մ$^3$, ժայռային մակաբացման ծավալը 2518621 մ$^3$:

Մակաբացման ապարների տեղափոխումը մինչև արտաքին լցակույտ և հանքաքարի տեղափոխումը մինչև ժամանակավոր կուտակման պահեստ, նախատեսվում է կատարել HOWO մակնիշի 13 տ բեռնատարողությամբ և 6.6 մ$^3$ թափքի տարողությամբ ավտոհինքնաթափերի միջոցով: Մակաբացման ապարները պահեստավորվելու են արտաքին լցակույտում, որը նախատեսվում է տեղակայել բացահանքի հարավային մասում:

Լցակույտի առավելագույն բարձրությունը կազմում է 80 մ, ընդհանուր մակերեսը 21.5 հա, վերին հրապարակի մակերեսը՝ 13 հա: Ընդունված է լցակույտառաջացման բուլդոզերային եղանակը: Ավտոհինքնաթափերը դատարկվելու են վերին հարթակի վրա, որից հետո բուլդոզերով իրականացվելու են ապարների տեղափոխման ու հարթեցման աշխատանքները:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիան կիրականացվի արդյունահանման աշխատանքների ավարտից հետո: Ռեկուլտիվացման ենթակա ընդհանուր մակերեսը կազմում է 31.2 հա:

Տեխնիկական և կենսաբանական ռեկուլտիվացիայի համար նախատեսվում է մասնահանել 13501.5 հազար ՀՀ դրամ, որից կենսաբանական փուլի ուղղակի ծախսերը կազմում են 7265.0 հազ. ՀՀ դրամ:

Խմելու ջուրը նախատեսվում է բերել Զառիթափ բնակավայրից, ԲՎ -1.2 կցովի ցիստեռնով: Տեխնիկական ջուրը բերվելու է КамАЗ ջրցան-լվացող ավտոմեքենայով:

Հանքավայրի ջրաերկրաբանական պայմանների համաձայն՝ գետնաջրերը բացակայում են, հետևաբար բացահանքի շահագործման պայմաններում ջրահեռացումը կատարվելու է

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

անմիջապես բացահանքի տարածք թափվող մթնոլորտային տեղումներից առաջացած ջրհոսքերի հեռացման նպատակով: Բացահանքի տարածք թափվող մթնոլորտային տեղումների մի մասը հեռանալու է ինքնահոս կերպով, իսկ մի մասն էլ հատակի ճեղքերի և դատարկությունների միջոցով ներծծվելու են խորքերը:
Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված կենցաղային աղբի տարեկան քանակը հաշվարկված է տարեկան 1.89 տ/տարի: Կենցաղային աղբը հավաքվելու է աղբամաններում և պարբերաբար տեղափոխվելու է համայնքապետարանի հետ համաձայնեցված, համաձայն պայմանագրի:
Կենցաղային կեղտաջրերը՝ օրական 0.42 մ3 ծավալով, նախատեսվում է լցնել բետոնե լցարան, որտեղից սահմանված կարգով պարբերաբար տեղափոխվելու է:
Բանեցված դողածածկերը, կուտակիչները, յուղային թափոնները, ֆիլտրները, յուղոտված սրբելանյութերն ու մետաղական ջարդոնը փոխանցվելու են համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին:

Հայցվող տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ, պատմության, բնության հուշարձաններ առկա չեն:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- փոշենստեցման նպատակով նախատեսվում է կատարել փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում՝ օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար,
-դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումները կահավորված կլինեն խլացուցիչներով, արտանետվող գազի հոսքի վրա տեղադրված կլինեն զտիչներ՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար,
- իրականացվելու է բացահանքի արդյունաբերական հրապարակի շրջակայքում կանաչապատում թփուտներով,
-նավթամթերքները պահեստավորվելու և պահվելու են արտադրական հրապարակում, հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), ինչին տրվելու է համապատասխան թեքություն, ինչն ապահովելու է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը,
-անհրաժեշտության դեպքում կազմակերպվելու են անձրևաջրերի պահման լճակներ,
- սուլֆիդով հարուստ թափոններն անհրաժեշտության դեպքում կծածկվեն անթափանց նյութերով, ինչպիսիք են սեղմված կավը կամ սինթետիկ երեսպատումը,
-այնտեղ, որտեղ դրենաժի ռիսկը մեծ է, կրաքարի կամ ալկալային ռեակտիվները կարող են ավելացվել լցակույտերին՝ չեզոքացնելու թթվային արտահոսքը և կանխելու երկարաժամկետ աղտոտումը,
-հանքավայրի տարածքում մեքենաների և մարդկանց անվտանգ տեղաշարժի համար սահմանվելու են ներքին երթևեկության ուղղություններ, արագության սահմանափակումներ, վտանգավոր հատվածների նշագրում և նախազգուշացնող նշաններ,
-օգտագործված յուղերն ու քսայուղերը հավաքվելու են առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալներն ու մասերը հավաքվելու են առանձին հատկացված տեղում և հանձնվելու են որպես մետաղական ջարդոն,

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- կեղտաջրերն հավաքվելու են հորատիպ զուգարանում, որը հետագայում դատարկվելու է հատուկ ծառայության ուժերով, պայմանագրային հիմունքներով,
- բուսական աշխարհի պահպանութունն իրականացվելու է համաձայն կառավարության 2014թ. թիվ 781-Ն որոշման դրույթների՝ բուսական աշխարհի օբյեկտների, դրանց աճելավայրերի պահպանությունով, ապահովելով վայրի բուսատեսակների բազմազանության ամբողջականությունը, բուսական ծածկույթի ջրապահպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ և ռեկրեացիոն հատկությունների անխաթարությունը,
- աշխատատեղերում աղմուկի ազդեցության նվազեցման համար նախատեսվում է տեխնիկատրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում:
Աշխատանքների իրականացման ընթացքում ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.
-մթնոլորտային օդի որակի պարբերական մշտադիտարկումներ՝ շաբաթական մեկ անգամ,
-հողային ծածկույթի մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ,
-մակերևութային ջրերի մշտադիտարկումներ՝ շաբաթական մեկ անգամ,
-աղմուկի և թրթռման մակարդակի չափումներ՝ ամսական մեկ անգամ,
-կենսաբազմազանության մշտադիտակումներ՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակի, աճելավայրերի և ապրելավայրերի տարածքի, պոպուլյացիայի փոփոխության՝ տարեկան մեկ անգամ:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում է տարեկան մասնահանել 1687.7 հազ. ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված մշտադիտարկումների իրականացման համար նախատեսվում է տարեկան 700.4 հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Վայք համայնքի Զառիթափ բնակավայրի Սոֆի-Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայրի արդյունահանման աշխատանքների ժամկետի երկարաձգման (նախագծի փոփոխության) վերաբերյալ իրականացվել են հանրային լսումներ Վայոց ձորի մարզի, Վայք համայնքի Զառիթափ բնակավայրում, որոնց ընթացքում մասնակիցները հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Վայոց ձորի մարզպետարանը, Վայքի համայնքապետարանը: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և բնապահպանական միջոցառումների իրականացման արդյունքում կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

## Փորձաքննական պահանջներ

- Աշխատանքների իրականացման ընթացքում պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները Կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- Աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:
-Աշխատանքների իրականացման գործընթացում ներգրավել ազդակիր բնակավայրի բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
- Արդյունահանման աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների գործածությունն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:
- Կիրառել փոշենստեցման, այդ թվում՝ փոշեճնշիչ սարքավորումներ՝ համաձայն տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 9-ի «Օգտակար հանածոյի արդյունահանման նախագծին ներկայացվող նվազագույն պահանջները սահմանելու մասին» N15-Ն հրամանի:
- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

## ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՋԻԷՄԷՆ ԳՈԼԴ ՄԱՅՆԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Վայք համայնքի Ջառիթափ բնակավայրի Սոֆի-Բինայի ոսկի-բազմամետաղային հանքավայրի արդյունահանման (ժամկետի երկարաձգման) շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան